

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Խ.Խ. ԿԳ Զարթույցի Միջոցի Կարգադրման -ին

Հ Հ Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի
Վարդան Գալստյան -ից
(հիմողի անուն, ազգանուն)
Գ. Արևել, 093753740
galstyan.ardis@yandex.com
(ընկալության վայր, հեռախոսի համար, էլ. փոստի հասցե)
*Կրթության նախարարության Վճարման
Կարգադրման Վճարման Կենտրոն*
00882355
(կազմակերպության լրիվ անվանումը, պետ. գրանցման համարը)


ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. *Վարդան Գալստյան*
2. *Վճարման կարգադրման և կարգադրման միջոցի մասին*
3. *Կրթության նախարարության կողմից արված զննման ակտ*
4. *Կրթության նախարարության կողմից արված զննման ակտ*
5. *Մեղաբանի գրանցման ևսկի*
6. _____

Դիմող՝ *Վ. Վ. Վարդան Գալստյան*
25 մայիս 20/18.



24.05.2018թ.

ՀՀ Կրթության և գիտության նախարարությանը
Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի
Տնօրեն Մարինա Գալստյանից

Հետաքրքրության նամակ

Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնը 2012 թվականից իրականացնում է կրթության տարբեր բնագավառների և հարցերի վերաբերյալ հետազոտություններ, մասնավորապես՝

- Հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական պայմանների գնահատում, Ասպարեզ ՀԿ-ի և Թրանսփերենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի հետ համատեղ, 2018թ.,
- Խոշորացված համայնքներում համայնքային գույքի կառավարման գնահատում, Եվրասիա համագործակցության հիմնադրամների աջակցությամբ, 2017թ.,
- Ստեղծարար ոլորտներում երիտասարդների զբաղվածության ներուժի գնահատում Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի հետ համագործակցությամբ, 2017թ.
- ՀՀ ուսանողների սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրություն, 2013թ. դեկտեմբեր -2015 փետրվար ամիսներին
- Ներառական կրթության գնահատում, 2013թ., Բաց Հասարակության հիմնադրամներ հայաստանյան գրասենյակի աջակցությամբ,
- Բարձրագույն ուսումնական հաստատությունների շահառուների կարծիքի ուսումնասիրություն, 2012թ.:

Կենտրոնի գործունեության մասին առավել մանրամասն ներկայացված է փաթեթում:

ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ցանկանում ենք ներգրավվել, քանի որ պատրաստ ենք աջակցել կրթական քաղաքականության մշակմանը հիմնված հետազոտությունների վրա (evidence based policy). Պատրաստ ենք նախարարությանը տրամադրել հետազոտական և մեթոդաբանական աջակցություն՝ մշակելու չափելի կրթական քաղաքականություն: Կենտրոնն ունի նաև մոնիթորինգի և գնահատման իրականացման փորձ, ինչպես նաև մոնիթորինգի և գնահատման համակարգի ներդրման փորձ: Պատրաստ ենք աջակցելու կրթության քաղաքականության մոնիթորինգի և գնահատման համակարգի բարելավմանը:

Կենտրոնն ունի փորձագետների բազա, ովքեր մասնագիտացված են բարձրագույն կրթության, ներառական կրթության, հանրակրթության հարցերի շուրջ, ինչպես նաև երեխաների պաշտպանության և երիտասարդների բնագավառում, մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանությունների լավագույն մասնագետներից են: Խորհրդի կազմում ներգրավումը հնարավորություն կտա կիսվելու մեր փորձով և աջակցելու կրթական քաղաքականության մշակմանը և իրականացմանը կիրառելով հետազոտական ներուժը:

Պետական քաղաքականության մի շարք ոլորտներ սերտորեն խաչվում են, մասնավորապես երեխաների պաշտպանություն, երիտասարդական քաղաքականություն, սոցիալական քաղաքականություն, կրթական քաղաքականություն: Մեր կենտրոնը մի քանի տարի առնչվել է այս բոլոր ոլորտների հետ և բախվել է մեկ ընդհանուր խնդրի՝ միջգերատեսչական, միջոլորտային համագործակցության գործիքների սահմանափակ կիրառմանը: Հայաստանում տարվող երիտասարդական քաղաքականությունը մշակվում և իրականացվում է ոչ անհրաժեշտ չափով ինտեգրված սոցիալական, կրթական քաղաքականության հետ և հակառակը: Ցանկանում ենք ներգրավվել խորհրդի կազմում և ծառայեցնել այն որպես հարթակ միջոլորտային համագործակցության համար: Պատրաստ ենք նաև մշակել հավելյալ գործիքակազմ միջգերատեսչական համագործակցության մեխանիզմների շուրջ:

Հետաքրքրված ենք նաև ԿԳ նախարարության հետ համագործակցության այլ ձևաչափերով:

Հարգանքով,

Մարինա Գալստյան

Տնօրեն

Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն
Հասցե՝ ք. 0010 Երևան, Վազգեն Սարգսյան 26/3, 5-րդ հարկ, 514 սենյակ

Բջջ. (+374) 93 75 37 40

Հեռ. (+374) 10 56 33 74

www.e-research.am



ԵՐԵՎԱ
ՍՆԵՐԻ

Հասցե՝ Երևան, Վազգեն Սարգսյան, 26/3, 514 սենյակ
www.e-research.am

Հեռ՝ (+374) 10 56 33 74

Էլ. փոստ՝ info@e-research.am

Ամփոփ տեղեկանք Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի գործունեության վերաբերյալ

«Կրթական ուսումնասիրությունների և խորհրդատվությունների կենտրոնը» Հայաստանում գործող հետազոտական կազմակերպություն է, որը մասնագիտացած է կրթական հետազոտությունների ոլորտում: Հետազոտական կենտրոնը ստեղծվել է 2012թ. մարտ ամսին կրթության ոլորտով հետաքրքրված և մասնագիտացված մի խումբ հետազոտողների և փորձագետների կողմից:

«Կրթական ուսումնասիրությունների և խորհրդատվությունների կենտրոնի» գործունեության ոլորտներն են՝

- Կրթական հետազոտություններ
- Երեխաների պաշտպանության ոլորտի հետազոտություններ
- Սոցիոլոգիական հետազոտություններ և խորհրդատվություն
- Կրթական փաստաթղթերի մասնագիտական, սոցիոլոգիական փորձաքննություն և թարգմանություններ
- Դասընթացների և վերապատաստումների իրականացում

2012-2018թթ Կենտրոնի կողմից իրականացված հետազոտական ծրագրերը

- 2018թ. փետրվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնը Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի հետ համատեղ Թրանսփերենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի և ԱՄՆ ՄԶԳ օժանդակությամբ իրականացվող «Պահանջատեր հասակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում իրականացնում է ՀՀ հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական և սանիտարահիգիենիկ պայմանների մոնիտորինգ: Մոնիթորինգի շրջանակներում իրականացվել է մարզերի 50 դպրոցներում դպրոցների պայմանների դիտարկում, ինչպես նաև ուսուցիչների և աշակերտների շրջանում հարցում:
- 2017թ. հուլիս-հոկտեմբեր ամիսների ընթացքում մեր կենտրոնը Եվրասիա համագործակցության հիմնադրամի հետ իրականացրել է «Համայնքային սեփականության կառավարումը խոշորացված Թումանյան, Դիլիջան և Տաթև

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամը:

- Հայաստանում ներառական կրթության իրականացման գնահատում

«Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնը» 2013թ. հունվար – հունիս ամիսներին իրականացրել է «Հայաստանում ներառական կրթության իրականացման գնահատում» թեմայով հետազոտական ծրագիրը Բաց հասարակության Հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ֆինանսավորմամբ: Հետազոտության նպատակն էր պարզել, թե ինչպես է իրականացվել ներառական կրթությունը Հայաստանում, բացահայտել հիմնական ձեռքբերումներն ու բացթողումները:

Ծրագրի ընթացքում իրականացվել են հարցազրույցներ Երևանի, Տավուշ, Գեղարքունիք, Արագածոտն, Լոռի և Վայոց Ձոր մարզերի 34 ներառական դպրոցների աշակերտների, ուսուցիչների, ծնողների, վարչական կազմի ներկայացուցիչների, ինչպես նաև ոլորտի փորձագետների հետ: Հաշվետվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/Inclusive-education-report_ARM-without-tools.pdf

- Խնամատարության զարգացման հեռանկարները Հայաստանում

2012թ. դեկտեմբեր -2013թ փետրվար ամիսներին Կենտրոնն իրականացրել է «Խնամատարության զարգացման հեռանկարները Հայաստանում» թեմայով հետազոտությունը: Իրականացվել է որակակական հետազոտություն 22 4 մարզերում՝ Երևան, Լոռի, Արարատ և Գեղարքունիք: Հետազոտության նպատակն է պարզել, թե ինչպիսի արդյունքներ ունի խնամատարությունը՝ որպես այլընտրանքային խնամքի ինստիտուտ, որը Հայաստանում ներդրվել է 2005թ.: Հետազոտական ծրագիրը իրականացվել է Սեյվ դը Չիլդրեն հայաստանյան գրասենյակի պատվերով: Հաշվետվությունը հասանելի է հետևյալ հղումով՝

https://resourcecentre.savethechildren.net/node/7961/pdf/armenia_foster_care_study_final_1.pdf

- «ԶԱՆԳ» ծրագրի վերջնական գնահատում

2013թ. Փետրվար-մարտ ամիսներին Կենտրոնն իրականացրել է Հայաստանում իրավական սոցիալականացման «ԶԱՆԳ» ծրագրի վերջնական գնահատումը: Հետազոտական աշխատանքներն իրականացվել են Հայաստանի բոլոր մարզերում «Փրոջեքթ Հարմոնի, Ինք.»-ի պատվերով:

- Բարձրագույն ուսումնական հաստատությունների շահառուների կարծիքի ուսումնասիրություն

Առավել մանրամասն մեր գործունեության մասին՝ իրականացված ծրագրերի մանրամասն նկարագրություն, մշակված դասընթացների փաթեթներ, հավաքագրված հետազոտությունների հաշվետվություններ և այլն, կարելի է ծանոթանալ մեր կայքէջից՝ www.e-research.am, ինչպես նաև ֆեյսբուքյան էջից՝ <https://www.facebook.com/CenterforEducationalResearchandconsulting/> .

Պատրաստ ենք տրամադրել հավելյալ տեղեկատվություն կենտրոնի և կենտրոնի գործունեության վերաբերյալ:

Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն

Հակիրճ վերլուծություն

վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Հեղինակ՝ Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն

Ներկայացնում ենք կրթության ոլորտի տարբեր մակարդակներում և ուղղություններում առկա պետական կրթական քաղաքականության նպատակադրումները և ստացված արդյունքները՝ հիմնվելով տարբեր հետազոտությունների և վերլուծությունների, ինչպես նաև վիճակագրական տվյալների վրա: Վերլուծությունը չի ամփոփում բոլոր այն ուղղությունները, որոնցով տարվում է պետական կրթական քաղաքականությունը, սակայն ներկայացնում է կրթության տարբեր մակարդակների վերաբերյալ որոշ ուղղությունների վերլուծություն՝

- Նախադպրոցական կրթության հասանելիություն
- Ներառական կրթության որակ
- Հանրակրթության բովանդակային խնդիրներ, անհավասարությունը հանրակրթական դպրոցներում
- Բարձրագույն կրթության որակ, սոցիալական աջակցություն ուսանողներին, ինչպես նաև կրթություն-աշխատաշուկա կապ, երիտասարդների զբաղվածություն

Անդրադարձել ենք նաև տվյալների հավաքագրման, պահպանման, շրջանառության և վերլուծության մեխանիզմներին կրթական տարբեր մակարդակներում:

Նախադպրոցական կրթություն

Հայաստանում նախադպրոցական կրթությունն ուղղված է մինչև 6 տարեկան երեխաների խմբին: Հայաստանում նախադպրոցական կրթական ծառայությունները մեծ մասամբ գտնվում են պետական հոգածության ծրագրերի ներքո: Այն ընդգրկված է կրթական և սոցիալական քաղաքականության հայեցակարգի կարևորագույն ուղղությունների շարքում, ինչպես պետական, այդպես էլ միջազգային կազմակերպությունների ծրագրերի շրջանակում: 2016թ. ՀՀ-ում գործել է 721 համայնքային, գերատեսչական և ոչ պետական նախադպրոցական հաստատություն (ՆԴՀ), որոնցից 575-ը՝ մանկապարտեզ, 113-ը՝ մուր-մանկապարտեզ, 33-ը՝ դպրոց-մանկապարտեզ: ՆԴՀ-ների ընդհանուր քանակից 654-ը համայնքային ենթակայության է, 15-ը՝ գերատեսչական և 52-ը՝ ոչ պետական:

Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն
տարբեր մակարդակների վերաբերյալ վիճակագրական տվյալների, վերլուծական
արդյունքների միջև ևս առկա են տարբերություններ, նույնիսկ հակասություններ:
Մասնավորապես, Կրթության որակ և համապատասխանություն վարկային ծրագրերի
գնահատման հաշվետվությունները փաստում են առկա արդյունքների մասին՝
հանրակրթության և բարձրագույն կրթության որակի բարձրացում, իսկ տարբեր
հետազոտություններ փաստում են, որ առկա է որակի անկում⁴:

Շարունակում է նաև խնդրահարույց մնալ նախադպրոցական ծառայությունների որակը,
հատկապես գյուղական համայնքներում, մասնագիտական կադրերի աշխատանքի
որակը և ավանդական մոտեցումների գերիշխումը: Շատ ծնողներ ունենում են
նախադպրոցական հաստատության մուտքի խոչընդոտ, ինչը պարունակում է
կոռուպցիոն ռիսկեր:

Հանրակրթություն

Հանրակրթության գլխավոր նպատակը երեխաների, սովորողների մտավոր, հոգևոր,
ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ
զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը: («Կրթության
մասին» ՀՀ օրենք, Երևան, 1999)

Մի շարք հետազոտություններ ընդգծում են նաև հանրակրթական համակարգում
բովանդակային լուրջ բացերի մասին, որոնք խոչընդոտ են հանդիսանում երեխաների
մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների զարգացմանը:

Խնդիրներից առաջնայինը հանրակրթության բովանդակությանն է վերաբերում՝
դասագրքեր, որոնք վերարտադրում են գենդերային կարծրատիպերը, ծրագրեր, որոնք
սովորողին փոխանցում են միայն գիտելիք, սակայն չեն նպաստում այդ գիտելիքի
կիրառման հեռանկարի ձևավորմանը: Խնդիրը նաև սրվում է մանկավարժական
ավանդական մեթոդների կիրառման ավանդույթով պայմանավորված:

Կրթության ցածր որակը խթանում է վճարովի հիմունքներով կրթություն ստանալու
պահանջարկի ավելացումը: Ծնողների կողմից երեխաների գիտելիքները խորացնելու,
զբաղվածությունն ապահովելու, նրանց վարքի նկատմամբ վերահսկողություն
ապահովելու և այլ նմանօրինակ օբյեկտիվ գործոններից բացի, մասնավոր
պարապմունքների պրակտիկայի տարածմանը և դրանից բխող կոռուպցիոն ռիսկերի
առաջացմանը նպաստում են նաև կրթության որակին առնչվող մի շարք խնդիրներ, այդ
թվում՝

⁴ <http://www.cfep.am/files/legislation/537.pdf>

Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն
որակի բոլոր բաղադրիչները փոխկապակցված են և գործում են մեկ համակարգի
ներսում՝ ներազդելով միմյանց վրա:

Կարևոր է դպրոցաշինության ծրագրերում առաջնահերթություն տալ գյուղական
դպրոցների վերանորոգմանն ու կահավորմանը, ինչպես նաև ժամանակակից ու
բավարար քանակով տեխնիկայի ապահովմանը: Սակայն պետք է հաշվի առնել, որ
կրթության որակի մեկ բաղադրիչի բարելավումը՝ մյուս բաղադրիչների անփոփոխ մնալու
պարագայում, չի ունենա պատշաճ դրական ազդեցություն՝ ընդհանուր կրթական
ձեռքբերումների և վերջնարդյունքի տեսանկյունից⁸:

Հանրակրթական համակարգում ևս առկա է տվյալների հավաքագրման, տարածման,
պահպանման և վերլուծության խնդիր: Չնայած բավականին ամբողջական տվյալներ են
հավաքագրվում աշակերտների, ուսուցիչների, դպրոցի պայմանների վերաբերյալ,
սակայն հաճախ դրանց միջև առկա են հակասություններ վիճակագրական պետական
ծառայության կողմից հրապարակված տվյալների հետ:

Հանրակրթության ոլորտում ևս մի հարց կա, որը կարծես առկա է՝ դա դպրոցների
ներքին և արտաքին գնահատումն է: Հանրակրթության մասին օրենքում հստակ նշված է
դպրոցների ներքին և արտաքին գնահատման մասին, սակայն գործընթացը դեռևս
բավարարման կարիք ունի, մասնավորապես, ներքին գնահատման ընթացքում
դպրոցները մեթոդաբանական աջակցություն չեն ստանում, ինչպես նաև չի գործում այդ
գործընթացի երկրորդ և որակի երաշխիք հանդիսացող բաղադրիչը՝ արտաքին
գնահատումը:

Վերլուծության հաջորդ բաժում կանդրադատնանք նաև ներառական կրթության
իրականացմանը:

Ներառական կրթություն

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Ազգային ժողովը 2014 թվականի դեկտեմբերի 1-ին
ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ
կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության
համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության:
Մասնավորապես մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը նախատեսվում է ներդնել
համընդհանուր ներառական կրթության համակարգը՝ համաձայն ՀՀ կառավարության
հաստատված գործողությունների պլանի և ժամանակացույցի:

⁸ Կրթության իրավունքի հասանելիության և հավասարության հիմնախնդիրները ՀՀ հանրակրթության
ոլորտում, ԲՀՀ Հայաստան, 2017թ. http://www.osf.am/wp-content/uploads/2017/09/Educ_Equity_MainData_PPT.pdf


Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն
աշխատաշուկայում կան մի շարք խոչընդոտներ: Այս ամենը հանգեցնում է տնտեսական
համակարգում կառուցվածքային գործազրկությանը:
Հայաստանում կրթություն-աշխատաշուկա կապի ապահովման արդյունավետ
մեխանիզմների պակասը պայմանավորված է մի քանի գործոնով: Ուսումնական
հաստատությունները գործատուներին մասնակից չեն դարձնում կրթության
կազմակերպման և բովանդակության մշակման գործընթացներում: Ներկայումս
կրթության որակի վերահսկողությունը իրականացվում է հենց կրթական համակարգի
ներսում: Սակայն առավել արդյունավետ կլիներ, եթե գործատուն ոչ միայն հանդես գար
որպես պատվիրատու, այլև որպես կրթական գործընթացի վերահսկող և գնահատող:
Խնդիրը նաև թաքնված է տնտեսական համակարգում: Հայաստանում մասնավոր
հատվածի ընկերությունների գերակշիռ մասն ունի կարճաժամկետ պլանավորման
հորիզոն, և սակավաթիվ են երկարաժամկետ ներդրումային ծրագրերը:
Ընկերությունների շրջանում բացակայում է հստակ ձևակերպված պահանջարկը
երկարաժամկետ հեռանկարում մասնագետների նկատմամբ:
Մասնագիտական կրթության համակարգը նպաստում է կայուն, սակայն հետընթաց
հասարակական կառուցվածքի ստեղծմանը: Մի կողմից կրթության ինստիտուտի
հիմնական պատվիրատուների պահանջարկը բավարարվում է: Մյուս կողմից, սակայն,
շուկայում առաջանում է մի շարք մասնագիտացումների ավելցուկ՝ տնտեսագիտական,
իրավաբանություն և կառավարում:¹⁰
Կրթության և աշխատաշուկայի կապի մեկ այլ ցուցանիշ է զբաղված երիտասարդների
աշխատանքի և մասնագիտական կրթության կապը: Մասնագիտական կրթություն
ունեցող երիտասարդների զգալի մասը աշխատում է ոչ իր մասնագիտությամբ: Ըստ
երիտասարդների զբաղվածության հետազոտության տվյալների՝ հարցված աշխատող
երիտասարդների 36% աշխատում է իր մասնագիտությամբ, 34%-ի զբաղվածությունը
բացարձակապես չի համապատասխանում մասնագիտությանը, իսկ 14%-ի
զբաղվածությունը հիմնականում համապատասխանում է իրենց մասնագիտությանը: Իսկ
գործազուրկ երիտասարդների 55% ցանկանում է շարունակել կրթությունը: Նրանց
շրջանում 40% ցանկանում է փոխել իր մասնագիտացումը, 40% ցանկանում է շարունակել
նույն մասնագիտացմամբ, իսկ մնացած 20% ցանկանում է մասնագիտացում ձեռք բերել,
քանի որ դեռևս չունի¹¹:
Մտահոգիչ է նաև այն փաստը, որ տարիների ընթացքում գործազուրկների մեջ
բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռը շարունակաբար աճել է՝

¹⁰ Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. գործատու-երիտասարդ- ուսումնական
հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները, Երիտասարդական
ուսումնասիրությունների ինստիտուտ, 2015թ. Երևան

¹¹ 22 երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները, Երիտասարդական ուսումնասիրությունների
ինստիտուտ, 2014թ. Երևան

Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն

**Զբաղվածության և գործազրկության մակարդակը
Երիտասարդների շրջանում 2008-2015 թթ (%)**



Գծապատկեր 1. Երիտասարդների զբաղվածության ու գործազրկության մակարդակը, (%), ԱՎԾ, 2017 թ.

Ազատ շուկայական հարաբերությունների համատեքստում սկզբունքորեն փոխվել են աշխատանքային հարաբերությունների բնույթը, աշխատաշուկայի կարգավորման սկզբունքներն ու մեխանիզմները, ինչպես նաև աշխատաշուկայում պահանջարկի և առաջարկի ձևավորման օրինաչափությունները: Մասնագիտությունների ու զբաղմունքների ոլորտը դարձել է առավել դինամիկ, բազմազործոն և դժվար կանխատեսելի, արդյունավետ չի գործում մասնագետների պատրաստման պետական պատվերի համակարգը, ինչի հետևանքով Հայաստանի աշխատաշուկայում առկա է որակական և քանակական անհավասարակշռություն, որն արտահայտվում է գործազրկության բարձր իրական մակարդակով, որոշ մասնագիտությունների գծով՝ կադրերի գերարտադրությամբ և որոշ դեպքերում՝ պահանջարկ ունեցող մասնագետների պակասությամբ: Այսպես օրինակ, միայն տնտեսագետների և իրավաբանների առաջարկը ՀՀ-ում մի քանի անգամ գերազանցում է պահանջարկին: Մինչդեռ բարձրագույն ուսումնական հաստատություններում շարունակվում է այդ ուղղություններով մասնագետների զանգվածային պատրաստում:

Այս վերլուծությունը չի հավակնում լինել կրթական պետական քաղաքականության ամբողջական, համալիր վերլուծություն, անհրաժեշտության դեպքում պատրաստ ենք սակայն ներկայացնելու կրթական քաղաքականության առավել խորքային և գործոնային վերլուծություն: